



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՅՈՒ ՄԱՀՎԱՆ
ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆԻ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՅ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԿԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՅԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԻԱՏԱՅԵԱԼ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Զայնու ժամանակս բազում էին երևելի վարդապետք լէջմիածին, քաջարանք, բանաստեղծք աստուածային գրոց, քաջք գիտունք և հմուտք; յորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան»:

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՅԻ

Յիշենք անցեալը, արդար գնահատելու համար մեր ներկան, և յստակ տեսնելու համար ուղիղ ճանապարհը սպազալին:

Հազարազանգ Անիի անկումէն և Կիլիկեան հայոց թագաւորութեան կործանումէն յետոյ, հայ ժողովուրդը սպրեցաւ իր պատմութեան ամենամոռւղ դարերը: Տասննետօրերորդ դարու սեմին, ան արդէն իր հոգեվարքը կ'ապրեր,

մարմնապէս՝ արհնաքամ, հոգեպէս՝ ինքնակորոյս, իմացապէս՝ խաւարի մէջ ընկղմած: Հոգեվարքի մէջ էր նաև Հայաստանեայց եկեղեցին: Հայաստանը ամբողջ աշխարհ մըն էր աներակներու և փլած հոգիներու, յուսահատութեան ծանր կապարի տակ կքած: Հայը կորսնցուցած էր զգացումը՝ իր ազգութեան, իր քաղաքակրթութեան: Մոռցուած էին գիր ու գրականութիւն: Հանգած էր ոգին հայոց պատմութեան: Իսկ վերջին հարուածը եկեր էր իջեցնելու, մեր անտէր ու թշուառ ժողովուրդի գլխուն, Յահաբբասեան բռնագաղթը, երբ տասնեակ հազարաւոր հայ ընտանիքներ բռնեցան դէպի հեռաւոր ափերը՝ Պարսից երկրին: Կը թուէր թէ տասնեօթերորդ դարը տապաւնաբարը պիտի դնէ հայոց պատմութեան:

Ահա այդպիսի դաժան դարու մը սեմին, այդպիսի ողբերգական մէկ պահուն, մեր պատմութիւնը կ'արձանագրէ ոգեկան ուժերու անհաստալի ու գարմանալի զարթօնքի մը փայլատակումը: Հայոց աշխարհի քաօսին մէջ, շարժիլ կը սկսի լոյսի մը ճառագայթը:

Վանքերու խուլ անկիւններէն, դարերու մոխիրը թոթափած, տեսիլք ունեցող հայ վանականներ, կը բարձրացնեն իրենց ճակատները դէպի երկինք, կը սթափին ցեղին մահուան բունէն, կը զգան հոգևարքը եկեղեցիին ու ազգին, ու կը տեսնեն ճանապարհը փրկութեան: Այդ օրերուն սակաւին կարելի չէր մտածել իսկ ազգային ազատագրական շարժումի մը մասին, բայց փրկարար լոյսը կը սկսի ճամբայ բանալ՝ կրօնական զարթօնքի և ազգային դպրութեան ուղիով:

Այդ հոգևոր ու ազգային զարթօնքի առաջին դրօշակակիրները կը հանդիսանան հոյլ մը ուխտեալ վանականներ, որոնք հիմը դրին Սիւնեաց մեծ Անապատին, Տաթևի վանքին մօտ, ԺԷ դարու սկիզբներուն: Խարխլած հին վանքերը վերանորոգելու, դպրանոցներ բանալու և «Հայոց ազգը լուսաւորելու» շարժումը, տակաւ գետին կը գտնէ ու կը տարածուի: Ու շուտով, շարժումին կեդրոնը կը դառնայ Մայր Աթոռ ս. Էջմիածին: Նոր ճառագայթումով կը զարթնի հայոց քրիստոնէական ոգին, կը սկսի տարածուիլ հայ գիրն ու գրականութիւնը, կը հիմնուին բազմաթիւ դպրանոցներ, կը զարթնի հայոց ազգային արժանապատուութեան զգացումը և պատմութեան ոգին: Ստրուկ դարձած, յօշոտուած ու յուսալքուած հայը կը սկսի ճանչնալ ու զգալ իսկութիւնը և ազատութիւնը իր հոգիին:

Հայ վերածնունդի այս շարժման կարևոր դեմքերէն ու դերակատարներէն մին կը հանդիսանայ Առաքել վարդապետ Դարիժեցին, միաբանը սուրբ Էջմիածնին, աշակերտը շինարար Փիլիպպոս կաթողիկոսին, որուն հրամանաւ գրի կ'առնէ իր յայտնի պատմագրութիւնը՝ «Պատմութիւն Առաքել Դարիժեցոյ, սակս դիպտածոց Հայաստանեայց ի գաւառէն Արարատայ և մասին Գողթան գաւառի»՝ զոր կ'աւարտէ 1661 թուականին, Յակոբ կաթողիկոսի օրով: Առաքել վարդապետ, այդ բախտորոշ տարիներուն, ս. Էջմիածնի հաստատոր ու հայրենասէր հոգևորականներու առաջին շարքին վրայ կը գտնուի՝ իբրև եկեղեցոյ լուսամիտ ծառայ և քաջասիրտ քարոզիչ, իբրև ուսուցիչ և գրող, իբրև հաստատարիմ ու ժրաջան գործակից Հայոց Հայրապետներուն: Զինուորեալ վարդապետը պատուով կը կատարէ իր պարտքը նաև իբրև հայրապետական նուիրակ դէպի Յունաստան, Իսպանիա, Ամասիա, Սեբաստիա, Ռոհա, Հալէպ և Երուսաղէմ, ամենուրեք ցիրուցան հայութեան տանելով Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութիւնը և հայրենիքի հայ հոգևոր զարթօնքի անտիսը, ապահովելով միաժամանակ, պանդուխտ հայութեան

նիթական օգնությունը և Էջմիածնի պայծառության և Հայաստանի վանքերու շինության ի խնդիր:

Դարիժեցի վարդապետը իր ամբողջ կեանքով ու գործունեությամբ, համակ ներշնչում է, համակ նուիրում, անդուլ աշխատանք, անսակարկ ծառայություն, և մարմնացումը իր ժամանակի հայոց վերածնած քրիստոնեական հաւատքին և պայծառ հայրենասիրության: Ծշմարտապէս առաքելատիպ հայ հոգևորականն է, սուրբ Էջմիածնի պաշտամունքով ոգեշնչուած: Այսօր ալ, երեք հարիւր տարիներու բարձունքէն, աստուածաւեր ու հայրենանուէր վարդապետը կը պատգամէ մեզի ամենուս՝ «Ի վերայ Աջուն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»:

Օրհնություն և լոյս Դարիժեցի Առաքել վարդապետի սուրբ յիշատակին:

Այսու Մեր կոնդակով կ'առաջադրենք ու կը պատուիրենք, որպէսզի Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ հանդիսատր հոգեհանգստեան արարողություններ կատարուին Առաքել վարդապետի յիշատակին, անոր մահուան երեքհարիւրամեակի առթիւ, լսուաջիկայ մայիս ամսուան ընթացքին և կենդանի խօսքով ու հրատարակություններով ընդգծուին կեանքն ու վաստակը Մայր Աթոռի վաստակաշատ միաբանին:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք լելս զնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7): Ամէն:

Վաչագհ Բ

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կոնդակս ի 21-ն լունուարի
1970 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԺԹ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 678

